







**Դեյվիդ Բեդֆորդ, Ռոզի Ռիվ**

**ԼԻՆՈՒՄ Է, ՉԻ ԼԻՆՈՒՄ... ԱՌՑԱՆՑ**

Անգլերենից թարգմանեց Քրիստինե Օհանյանը
Խմբագիր, սրբագրիչ՝ Ազնիվ Նասլյան
Էջադրումը՝ Արմինե Պապանյանի
Կազմը՝ Մեղրի Շամմասեանի

Copyright © Parragon Books Ltd 2016

Թարգմանվել է Հանրային լրագրության ակումբի «Ավելի անվտանգ առցանց միջավայր. նախադպրոցական հաստատություններում մ եդիագրագիտության ուղղությամբ միջամտություն» ծրագրի շրջանակում, որը ֆինանսավորվել է ԱՄՆ պետքարտուղարության Հասարակայնության հետ կապերի գրասենյակի դրամաշնորհի շրջանակում:

Հեքիաթում արտահայտված է հեղինակի դիրքորոշումը, որի համընկնումը ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշման հետ պարտադիր չէ:

Հեղինակային իրավունքները պատկանում են Հանրային լրագրության ակումբին:

**ISBN 978-9939-76-727-7**

Տպագրվել է «Անտարես» հրատարակչատանը

The U.S. Embassy in Armenia

ՀԼԱ PJC
ՀԱՆՐԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲ
PUBLIC JOURNALISM CLUB

# ԼԻՆՈՒՄ Է, ՉԻ ԼԻՆՈՒՄ...
# ԱՌՑԱՆՑ

Դեյվիդ Բեդֆորդ

Ռոզի Ռիվ





Ոչ այնքան վաղուց՝
ինչ-որ ժամանակ,
կանգնած էր Ջեկը
լոբու ցողունի տակ:



Երբ փորձում էր բարձրանալ
նա ցողունն ի վեր,
հանկարծ գլխին ընկավ
մի իսկա փոպրակ:




«Սա նվեր է»,- մտածեց փղան:
Բացեց ու փեսավ հա՜րթ, փայլո՜ւն մի ԲԱՆ:

«Ի՞նչ ես դու,- Ձեքն ասաց,-
և ի՞նչ ես դու անում»:
Ու վազեց՝ գտնելու մեկին,
ով կօգներ իրեն դրանում:

Ու գտավ Մոխրոտիկին,
որ կանգնած էր՝ ավելը ձեռքում:
«Ես գիտեմ, թե սա ինչ է,- ասաց,-
սա
ԼԵՓԹՈՓ
է կոչվում:

Դեն նետեց Մոխրոտը ավելը ձեռքի
ու խլեց արագ լեփթոփը Ջեքից:
Նսպեց ու կապարեց
ԱՌՑԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐ:



Սրանով կարող եմ անել շատ բաներ,
բայց կարևորը ԿԳՆԵՄ ԶԻՄԱ
ՊԱՐԱԶԱՆԴԵՍԻՆ ՀԱԳՆԵԼՈՒ ՄԻ ԲԱՆ:

Կարմիր գլխարկը, դռան մոտ կանգնած,
թիկնոցն էր զննում՝ հնացած, մաշված:

Վերցրեց լեփթոփը, երկար պրպտեց,
երկու զույգ կարմիր թիկնոց պատվիրեց:
Մի հեռախոս էլ, դե, ինչ իմանաս,
թե որ անտառում մոլորվի հանկարծ:



Եկավ Ռապունցելը՝ վարսերը կապած,
ու բացականչեց.
«ՊԵՏՔ Է ՊԱՏՎԻՐԵՄ ես արագ մի բան»:



Երեք խոզուկները փայտ էին փնտրում,

փոխարենը ծղոտ, աղյուսներ առան:

Հետո հայտնվեց Գայլը գազազած
և գոռգոռալով ներխուժեց, ասաց.





Հաջորդ առավոտ հրաշք կատարվեց.





# ՈՒՌԱԱԱ՜,

բարձր երգ ու ծիծաղ լսվեց։

Նրանց պափվերները ՀԱՍԵԼ ԷԻՆ ԻՐԵՆՑ...

Մոխրոտը պատրաստվում էր
պարահանդես գնալու
առանց կնքամորը
տեղյակ պահելու:






Իր հեռախոսի
մի հավելվածով՝
քարտեզի հետքով,
Կարմիր գլխարկը
անտառ շտապեց:

Երեք խոզուկները
տուն կառուցեցին.



Գայլը զբաղված էր,
շատ գոհ մնացին:





Իսկ Ռապունցելը
չհասցրեց
արձակել մազերը,
միացրեց պլանշետն,
ու արքայազնն
արդեն այնտեղ էր:

Բոլորն ապրում էին
ուրախ, երջանիկ,
ՄԻՆՉ...




Մոխրոտը սրտացավ հաշիվ է-ր-կ-ա-ր-ի՜-կ:

Երեկ խոզուկները սկսեցին գանգատվել,
թե անհնար է առանց Գայլի ապրել:





Իսկ Կարմիր գլխարկը էկրանով փարվեց,
մորենու փշոտ թփում խճճվեց:





«Օգնությո՜ւն»,- լսվեց
ձայն աշտարակից,
Ռապունցելն էր դժգոհ
չաշխատող պլանշետից:

Իսկ մեծ չար Գայլը չգիտեր ինչ անել,
երբ Հսկան նույնպես ուզեց
լեփթոփով խաղ անել:


«Թող անհետանա լեփթոփը իսկույն։
Խնդրում ենք, փարե՛ք այն
մեր աչքից հեռու»։

Հանկարծ ԱՆՆԿԱՏ հայտնվեց ՓԵՐԻՆ,
նա միշտ օգնում էր Մոխրոտիկին:



«Հերիք է տխրեք,–

ասաց,–

ես կուղղեմ ամեն ինչ,
բայց առանց մեծերի
մի՛ արեք ոչինչ»:



Հանեց փայտիկը ու թափահարեց,
և միանգամից հաշիվը փակվեց:

«Հիմա, բալիկնե՛ր, դուք գիտեք
առցանց նավարկել,
ժամանակն է սովորել
պլանշետից օգտվել»:



Ռապունցելը սովորեց մազերը հյուսել...

... և սովորեցրեց Գայլին
մարդկանց հետ շփվել:

Գայլն ասաց.





Իսկ Ջեքն ու Հսկան
ֆիլմի սցենար գրեցին,
«Մեր կախարդական լոբին»
անվանեցին:



Թե ուզեք առցանց
դաշփում զբոսնել...

...պեփք է նախ կնքամորը
փեղյակ պահել:

Ու այսուհետ միշտ
կարելի էր տեսնել նրանց՝
որքա՜ն երջանիկ,
ուրախ էին...
առցանց:









*Մենք՝ Հանրային լրագրության ակումբի թիմում համախմբված լրագրողներս, մեդիաաշխարհի մարդիկ ենք: Մեզնից ոմանք նաև ծնողներ են:*

*Ինչպես շատ ու շատ ծնողների, այնպես էլ մեր մտահոգություններից է ինչպես զերծ պահել մեր ու մեր երկրի երեխաներին համացանցի վտանգներից: Հենց այս մտահոգություններն էլ դրդեցին մեզ մտահղանալու «Ավելի անվտանգ առցանց միջավայր. նախադպրոցական հաստատություններում մեդիագրագիտության ուղղությամբ միջամտություն» ծրագիրը, որի նպատակն է նպաստել Հայաստանում մեդիագրագիտության և տեղեկատվական գրագիտության մակարդակի բարձրացմանը նախադպրոցական կրթական ոլորտում:*

*Ծրագրում ներառեցինք քայլեր, որոնք և՛ մեծերի, և՛ փոքրերի համար են: Մենք գիտենք, որ հեշտ չէ երեխաների հետ խոսել բարդ թեմաների շուրջ: Այդ պատճառով որոշեցինք օգնել ծնողներին ու մանկավարժներին և նախաձեռնեցինք այս գրքի թարգմանությունն ու հրատարակումը: Այս հարցում մեզ օգնեց Հայաստանում ԱՄՆ դեսպանատունը:*

*Հուսով ենք, որ գրքի հետ ծանոթությունը կօգնի թե՛ մեծերին, թե՛ փոքրերին՝ ավելի լավ հասկանալու համացանցն ու մեդիան, դրանց բերած հնարավորություններն ու բարօրության հասնելու նպատակով դրանք կիրառելու միջոցները, ինչպես նաև խուսափելու համացանցում առկա հնարավոր թակարդներից:*

*Մեծերի լեզվով ասած՝ այն կօգնի դառնալու մեդիագրագետ:*

*Գրքի հրատարակչական աշխատանքներին իրենց ներդրումն են ունեցել ծրագրի ղեկավար, Հանրային լրագրության ակումբի (ՀԼԱ) նախագահ Սեդա Մուրադյանը, ծրագրի համակարգող, ՀԼԱ աշխատակից Աննա Մեխակյանը, բանասեր Գոհար Մսրյանը և գրող Դավիթ Մուրադյանը:*

The U.S. Embassy in Armenia

ՀԼԱ PJC
ՀԱՆՐԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲ
PUBLIC JOURNALISM CLUB